ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ ՀԱՅ ԱՇԽԱՐՀԻԿ ՈՒ ՀՈԳԵՎՈՐ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ ՄԻԱՆԱԼՈՒ ՓՈՒԼՈՒՄ

Արարատ Հակոբյան

Պատմական գիտությունների դոկտոր
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ
ՀՀ, Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4
Էլ. հասցե՝ ararathakobyan47@gmail.com
ORCID: 0009-0005-8875-5970
Հոդվածը ներկայացվել է 14.11.2023, գրախոսվել է 20.11.2023, ընդունվել է տպագրության 25.04.2024
DOI: 10.53548/0320-8117-2024.1-30

Ամփոփում

Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին հայ ժողովրդի համար ունեցավ առաջադիմական նշանակություն՝ նրա կյանքի շատ ոլորտներում զարգացում ապահովելով: Դրանից զատ, պատմության այս փուլում՝ XIX դ. առաջին երեսնամյակում, հայ աշխարհիկ և հոգևոր շրջանակները մի շարք գործնական փորձեր կատարեցին՝ վերականգնելու հայկական պետականությունը (թագավորությունը):

Այդ նպատակով ռուսահայ մի խումբ գործիչներ՝ Խ. Լազարյանը, Կ. Արղությանը և ուրիշներ, ռուսական իշխանությունների գիտությամբ, մշակեցին հայկական ինքնավար թագավորության նախագիծ՝ Ռուսաստանի հովանու ներքո: Հայկական պետականության վերականգնման հույսեր էր փայփայում նաև հայ նշանավոր հոգևոր գործիչ արքեպիսկոպոս Ներսես Աշտարակեցին: Այդ ամենի յուրատեսակ խորհրդանշական արտահայտությունը դարձավ Ռուսաստանի կայսր Նիկոլայ I-ի կողմից «Հայկական մարզի» հիմնումը՝ հրամանագրով: Սակայն այն պահպանվեց մինչև 1840 թ., իսկ 1849 թ. վերածվեց Ռուսական կայսրության ծայրամասային մի նահանգի:

Հարկ է նշել, որ հայ-ռուսական հարաբերությունների բոլոր փուլերում, չնայած հայերի ցուցաբերած նվիրվածությանը և ռուսամետ կողմնորոշմանը, ռուսական կառավարությունը, գործնականում առաջնորդվելով մեծապետական, նվաճողական շահերով, մերժում էր հայկական պետականության վերականգնման, առավել ևս անկախության գաղափարը:

Եվ միայն նշված իրադարձություններից 100 տարի անց հայ ժողովուրդը կարողացավ վիթխարի ջանքերի գնով ձեռք բերել քաղաքական անկախություն և 1918 թ. վերականգնել հայկական պետականությունը՝ Հայաստանի Հանրապետությունը:

Բանալի բառեր՝ Արևելյան Հայաստան, Ռուսաստան, Թուրքմենչայի պայմանագիր, Ն. Աշտարակեցի, Ի. Պասկևիչ, ինքնավարություն, «Հայկական մարզ»:

Ներածություն

Հայոց նոր շրջանի պատմության պատմագիտական քննության առանցքային հիմնախնդիրներից են ուշ միջնադարից օտար նվաճողների բիրտ լծի տակ հայտնված հայության ազատագրման և անկախ պետականության՝

XIX դ. հայ ականավոր հրապարակախոս Ստ. Նազարյանցի բնորոշմամբ՝ «**քաղաքական անօթի**», վերականգնման հարցերը[1]: Հայտնի է, որ հին և միջնադարյան Հայոց (թվով՝ 5-6) պետականությունների կորստից հետո XVI-XVII դդ. թուրք-պարսկական պատերազմներում հայոց հայրենիքը կռվախնձոր դարձավ և մի քանի անգամ բաժանվեց նրանց միջև, որի հետևանքով հայ ժողովուրդը հայտնվեց այդ երկու՝ արևելյան տիպի բռնապետական կայսրությունների տիրապետության տակ:

Բնականաբար, ազատաբաղձ գաղափարներով տարված հայ հոգևոր և աշխարհիկ գործիչները դարեր շարունակ պայքարում էին հայրենիքի ու ժողովրդի ազատագրման համար: Տեսնելով, որ սեփական ուժերով հնարավոր չէ ազատագրվել թուրք-պարսկական բռնապետական լծերից՝ նրանք սկզբում դիմեցին Արևմուտքի քրիստոնյա պետություններին՝ ակնկալելով նրանց օգնությամբ վերականգնել հայոց պետականությունը: Բայց արդյունքի չհասնելով՝ հայ հասարակական-քաղաքական միտքը կողմնորոշվեց դեպի Հայաստանի հյուսիսային մեծ հարևանը՝ դեպի օրեցօր զորեղացող Ռուսաստան: Սկսած Պետրոս Մեծի ժամանակներից՝ Հայաստանի ազատագրման ու պետականության վերականգնման նպատակով հայկական պատվիրակություններ էին մեկնում այնտեղ: Ծրագրեր էին կազմվում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ռուսաստանի կողմից տարածաշրջանի նվաճումը օբյեկտիվորեն համընկնում էր հայերի ազատագրական ձգտումների հետ:

Ռուսական բանակը քանիցս պատերազմներ էր մղել Պարսկաստանի դեմ, և, ի վերջո, XIX դ. առաջին երեսնամյակի երկու հաղթական պատերազմների շնորհիվ՝ 1813 թ. հոկտեմբերին Գյուլիստանի, իսկ 1828 թ. փետրվարին Թուրքմենչայի ռուս-պարսկական պայմանագրերով, ամբողջ Արևելյան Հայաստանը միացվեց Ռուսաստանին: Դա պատմագիտական արժևորման ու գնահատականի առումով առաջադիմական նշանակություն ունեցավ հայ ժողովրդի համար: Սակայն պետք է նաև արձանագրել, որ քաղաքական իմաստով այն ազատություն ու անկախություն չբերեց հայ ժողովրդին:

Այս համատեքստում հարկ ենք համարում ներկայացնել պատմականորեն կարևոր երկու դրվագ, երբ հենց ռուս-պարսկական պատերազմի շրջանում (1826-1828 թթ.) հայ աշխարհիկ ու հոգևոր գործիչներն ակնկալում էին, որ ռուսական զորքի, ինչպես նաև պատերազմում հայերի գործուն մասնակցության շնորհիվ ազատագրված Արևելյան Հայաստանում հնարավոր է **վերականգնել հայկական պետականությունը**, անշուշտ, Ռուսաստանի հովանու տակ:

Դրվագներից մեկը անցյալից ավանդաբար ժառանգված՝ ռուսահայ գործիչների՝ 1827 թ. դեկտեմբերի վերջերին կազմած նախագիծն էր Հա-

[1] Նազարեանց 1913, ԼԵ, 89-90 և 99:

յաստանի պետականության վերականգնման վերաբերյալ՝ թեկուզ ինքնավարության կարգավիճակով, իսկ մյուսը, որ դարձյալ առնչվում էր պետականության գաղափարին, հայ նշանավոր հոգևոր գործիչ Ներսես Աշտարակեցու թափած հայրենասիրական ջանքերի մասին էր՝ միտված ռուս զորավար Ի. Պասկևիչի օժանդակությամբ հաջողելու հայոց ինքնավարության խնդիրը: Սակայն երկու դեպքում էլ դրանք կյանքի չկոչվեցին, քանզի ռուսական կառավարությունը առաջնորդվել ու առաջնորդվում է սեփական մեծապետական ազգային շահերով և բոլոր ժամանակներում բացառել է հայկական կամ իր կողմից նվաճված որևէ այլ երկրի ու ժողովրդի պետականության, առավել ևս անկախության վերականգնման հնարավորությունը: Ինքնին հասկանալի է, որ ռուսական իշխանություններն իրենց նվաճումների ճանապարհին խրախուսում էին քրիստոնյա ժողովուրդների ակտիվ մասնակցությունը այդ գործընթացներին, իհարկե, այդ ընթացքում ազատագրման մասին բանավոր խոստումներ տալով այդ ժողովուրդներին: Բայց դրանք այդպես էլ մնում էին անկատար:

Դրվագ 1. Ռուսահայ աշխարհիկ գործիչների փորձերը Ռուսաստանի հովանու ներքո Հայկական ինքնավար թագավորություն հիմնելու հարցում

Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու փուլում հայ հասարակական գործիչները, ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմներում հիմնականում ռուսական կողմում իրենց ակտիվ մասնակցությամբ ջանքեր էին գործադրում ռուսական հովանու ներքո հայկական պետականության գաղափարի նյութականացման ուղղությամբ: Հիրավի, Արևելյան Հայաստանի նվաճումը և ռուսական տիրապետության հաստատումն Անդրկովկասում հայ հասարակական-քաղաքական շրջանակներում ավելի առարկայական հույսեր արթնացրին, և ազատագրության ծրագրեր մշակվեցին արևելահայ տարածքներում վերականգնելու հայկական պետականությունը՝ միգուցե ինքնավարության ձևով: Այդ իմաստով, XIX դ. առաջին երեսնամյակին, մասնավորապես՝ ռուս-պարսկական երկրորդ պատերազմի շրջանում ռուսական զենքի միջոցով Հայաստանի ազատագրման և անկախության վերականգնման հույսով էին խանդավառված հայ աշխարհիկ ու հոգևոր մի խումբ գործիչներ: Հայ ազգային գործիչ, պատմաբան Գ. Լազյանն այդ մասին գրում է. «Հայ ազգային գործիչները կը յուսային ոչ միայն ազատագրուիլ պարսկական եւ թրքական լուծէն, այլեւ վերաստեղծել Հայաստանի անցեալ փառքը, դառնալու համար ազատ ու անկախ պետութիւն»[2]:

Հենց այդ շրջանում ռուսաց մայրաքաղաքում մի խումբ հայ հայրենասեր գործիչներ՝ **Խաչ. Լազարյանը**, **Կոնստ. Արղության-Երկայնաբազուկը**, **Ալ. Խուդաբաշյանը** և ուրիշներ, ռուս-պարսկական երկրորդ՝ 1826-1828 թթ.

[2] Լազեան 1991, 1:

պատերազմի ընթացքում, հետևելով XVIII դ. երկրորդ կեսի իրենց նախորդների՝ Հ. Արղությանի Հ. Լազարյանի, Շ. Շահամիրյանի հայրենանվեր օրինակին, միաժամանակ հայերին խրախուսելու նպատակով, ռուսաց կայսր Նիկոլայ 1-ի գիտությամբ Ս. Պետերբուրգում մշակեցին և 1827 թ. դեկտեմբերին կառավարությանը ներկայացրին հայ ազգային շրջանների ազատաբաղձ տրամադրություններն արտահայտող քաղաքական բազմահոդված մի **նախագիծ**, որով առաջ էր քաշվում Անդրկովկասի հայկական տարածքներից Ռուսական կայսրության հովանու ներքո **Հայկական ինքնավար թագավորություն** ստեղծելու գաղափարը: Այն օժտվելու էր ներքին ինքնավարության իրավունքով, հայկական օրենքներով ու զինուժով, զինանշանով, դրոշով և նման հատկանիշներով, իսկ ռուսաց կայսրը պաշտոնապես ընդունելու էր նաև հայոց թագավորի տիտղոսը: Տարածքային առումով Հայկական թագավորությունը պետք է ընդգրկեր ռուսական տիրակալության ներքո գտնվող հայկական պատմական բոլոր տարածքները[3]: Այդ նույն գաղափարի ջատագովներից էր նաև վիրահայոց թեմի առաջնորդ, մեծ հայրենասեր Ներսես արք. Աշտարակեցին, որը հույս էր տածում ռուսական զենքի միջոցով վերականգնելու արևելահայ, այսպես կոչված, «Հայկական դքսությունը»[4]:

Սակայն այդ նախագիծը նախորդների նման մնաց անկատար: Դրա փոխարեն 1828 թ. մարտի 21-ին Նիկոլայ I-ի բարձրագույն հրամանով Թուրքմենչայի պայմանագրով Ռուսական կայսրությանը միացված Երևանի և Նախիջևանի նախկին խանությունների և Օրդուբադի օկրուգի տարածքներից ստեղծվում է ընդամենը «**Հայկական մարզ**» (Армянская область) անվանումով վարչատարածքային մի միավոր՝ այն ներառելով կայսեր տիտղոսի մեջ[5], որից, սակայն, մեկ տասնամյակ անց (1840 թ.) «Հայկական մարզ» կոչված վարչական անվանումն էլ պիտի դուրս մղվեր և, ի վերջո, վերածվեր հսկայածավալ կայսրությանը բնորոշ սովորական մի նահանգի (1849 թ): Ժամանակին ճիշտ է նկատել պրոֆ. Վ. Պարսամյանը, որ՝ «Ցարական կառավարությունը Հայկական մարզի ստեղծման հետ բնավ չէր կապում ո՛չ «**անկախ**», ո՛չ «**ավտոնոմ**» **Հայաստան** և ո՛չ Ռուսաստանի հարավում «**բուֆերային**» **մի պետություն** ստեղծելու նպատակ: Նա բոլորովին էլ մտադիր չէր իր վիթխարի կայսրության մեջ մի ինչ-որ նոր, այն էլ օտարազգի պետություն ստեղծել (ընդգծումները մերն են - Ա.Հ.)»[6]: Դա

[3] Տե՛ս Պարսամյան 1967, 101, Դիլոյան 1966, 181, Հայոց պատմություն 2010, 262:

[4] Тунян 2012, 169-172.

[5] Հիշարժան է հայ հասարակական-քաղաքական գործիչների ակտիվությունը, որոնք հայկական թագավորության վերականգնման հույսեր էին փայփայում: Նրանք անգամ հայկական զինանշանի մի նախագիծ պատրաստեցին հայկական թագի, Մասիսի, Արարատյան դաշտի ու Սուրբ Էջմիածնի պատկերով: Դա, իբրև Հայկական մարզի զինանշան, 1833 թ. հաստատվեց Նիկոլայ I կայսեր կողմից: Սակայն այդ ոգևորությունը կարճ տևեց:

[6] Պարսամյան 1947, 138:

հակասում էր ցարական Ռուսաստանի մեծապետական ու ծավալապաշտական շահերին: Միանգամայն տեղին է նաև պրոֆ. Վ. Դիլոյանի դիտարկումը. «Միամտություն էր, իհարկե, մտածել, որ սեփական ժողովրդին երկաթյա կապանքի մեջ պահող նիկոլևյան ռեժիմը կընդառաջեր հայ ժողովրդի և նրա իղձերն արտահայտող գործիչների ազատագրական բաղձանքներին, ազատություն կշնորհեր մի երկրում, որը բանտ էր ժողովուրդների համար»[7]: Մի խոսքով, հայերի փայփայած քաղաքական հույսերը, կապված Ռուսաստանի հետ, պատրանքային էին և այդպես էլ չարդարացան:

Այս կապակցությամբ հարկ ենք համարում նշել, որ «Հայկական մարզի» և ընդհանրապես Արևելյան Հայաստանի էթնիկ կազմի ու պատկանելության վերաբերյալ մեր օրերում հարևան Ադրբեջանի պետական և տեղեկատվական միջոցներով լայն տարածում է ստացել կեղծ ու ստահոդ քարոզչական այն վարկածը, թե իբր XIX դարասկզբին Ռուսական կայսրությանը միացված արևելահայ տարածքների՝ Երևանի և Նախիջևանի պարսկական խանությունների հիմքի վրա 1828 թ. մարտի 21-ին ստեղծված «Հայկական մարզը» ոչ ավել, ոչ պակաս համարվում է «Արևմտյան Ադրբեջան»[8]: Մինչդեռ պատմական իրողությունն այն է, որ մինչև 1918 թ. չէր կարող խոսք լինել Անդրկովկասյան Ադրբեջան վարչական, էլ չենք ասում՝ պետական միավորի կամ «ադրբեջանցի» կոչվող ազգի մասին: Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միանալու ժամանակներում արևելակովկասյան տարածաշրջանում (դիստանցիաներում) ապրող մուսուլմանական էթնիկ տարրերը հայտնի են եղել որպես *կովկասյան թյուրք* կամ *թաթար* անունով, և դրանք տակավին չէին ձևավորվել որպես ազգային ինքնագիտակցության հասած, ինքնաբավ ազգային (էթնիկ) միավոր: Այստեղ կարող է նույնիսկ հարց ծագել. երբ Նիկոլայ I կայսրը պաշտոնապես հրամանագրում էր «Հայկական մարզի» անվանակոչումը, ապա *ադրբեջանցի* համարվող մտավորականները, եթե իրոք կային այդպիսիք, ինչո՞ւ հանդես չեկան որևէ հրապարակային քաղաքական հայտարարությամբ՝ դժգոհելու և մեղադրելու Նիկոլայ I-ին ադրբեջանական հողերը «Հայկական մարզ» անվանելու հարցում: Բնականաբար, չէր կարող լինել այդպիսի բան, քանզի երկու դար առաջ դեռևս չկար ձևավորված նման որևէ ազգ:

Կրկին անդրադառնալով ադրբեջանական պետական ու հանրային քարոզչամեքենայի կողմից ներկայումս լայնորեն թմբկահարվող «Ադրբեջան» աշխարհագրական հասկացության և արևելակովկասյան երկրամասը, ինչպես նաև Արևելյան Հայաստանը Ադրբեջան ներկայացնելու կեղծ՝ ծավալապաշտական հավակնություններին՝ XIX դարասկզբի համապատասխան վավերագիր նյութերով կարող ենք փաստել հետևյալը: Ինչպես հայտնի է,

[7] Դիլոյան 1989, 321:
[8] Տե՛ս Гусейнов, 2013:

1801 թ. հունվարի 18-ին Պավել I կայսեր մանիֆեստով Արևելյան Վրաստանը (Քարթլի-Կախեթի թագավորությունը) բռնակցվեց Ռուսաստանին: 1801 թ. մարտի 11-ի պալատական հեղաշրջման ժամանակ դավադրությամբ սպանված Պավել I-ին հաջորդած՝ նրա որդի Ալեքսանդր I-ը 1801 թ. սեպտեմբերի 12 (24)-ի մանիֆեստով վերահաստատեց Արևելյան Վրաստանի միացումը Ռուսաստանին: Ուշագրավ է, որ Ալեքսանդր I-ի մանիֆեստում կան, տարածաշրջանի պատմաաշխարհագրական մի շարք անվանումների հետ միասին, այդ թվում՝ Կասպից ծովի, Կուր-Արաքսյան ռազմավարական հանգույցի, Քարթլի-Կախեթի, Վրաստանի, Պարսկաստանի, ինչպես նաև երկու անգամ Հայաստանի (ընդ որում, մի դեպքում՝ «**Մեծ Հայաստան**» անվանումով) հիշատակություններ[9]:

Վերստին դառնալով պետականության գաղափարին՝ այս անգամ կապված արդեն Արևմտյան Հայաստանի հետ, հարկ է փաստել, որ 1828-1829 թթ. ռուս-թուրքական հերթական պատերազմի առնչությամբ, արևմտահայ աշխարհիկ ու հոգևոր գործիչները ակնկալություն են ունեցել ռուսական զորքի ու զենքի օգնությամբ ազատագրել նաև Արևմտյան Հայաստանը: XIX դ. պատմաբան Ալ. Երիցյանը գրում է, որ Կ. Պոլսի մեջ լուրեր էին պտտվում, թե իբր «Ռուսիան մտադիր է՝ Հայոց թագավորություն հռչակելու մտքով՝ խլել նաև Տաճկական Հայաստանը»[10]: Բայց դրանք ևս կարելի է համարել ընդամենը հիմնազուրկ, պատրանքային լուրեր: Այդուամենայնիվ, պատմականորեն տեղին է ակադ. Ա. Մելքոնյանի դիտարկումը, որ հայկական պետականության վերականգնման հարցում, ռուսական կառավարության հանդես բերած անտարբերությամբ հանդերձ, հայ գործիչներն ու հանրությունը շարունակել են «գործուն աջակցություն ցույց տալ Անդրկովկասը նվաճելու Ռուսաստանի ձգտումներին»[11]: Բարեբախտաբար թե դժբախտաբար այդ մտածելակերպը մեզանում տակավին պահպանվում է նաև մեր օրերում: Եվ դա կարելի է համարել հայ հանրության շրջանում արմատացած՝ ավելի քան

[9] Տե՛ս ПВАР, т. 1, док. 1456, 176, Присоединение Восточной Армении к России (1801-1813) 1972, 44, Внешняя политика России XIX и начала XX в. 1960, 93-94 և др. Այդ համատեքստում, բնականաբար, հարց է ծագում՝ կա՞ր արդյոք «Ադրբեջան» անվանումով գոնե վարչատարածքային միավոր: Բայց թող զարմանալի չթվա՝ չկա որևէ հիշեցում ու հիշատակում Ադրբեջան երկրամասի մասին, քանզի XIX դարասկզբին չի եղել նման անվանումով երկիր, էլ չենք խոսում պետականության մասին: Այն ժամանակ խոսք կարող էր լինել ընդամենը պարսկական Ատրպատականի մասին, որի անվանումը անդրկովկասյան թյուրք-թաթարները հետագայում յուրացրին ու տարածեցին ներկայիս Ադրբեջան Հանրապետության վրա: Եվ այս ամենը այն պարագայում, երբ ընդամենը մեկ դարի պատմություն ունեցող Ադրբեջանի ներկայիս ծավալապաշտ առաջնորդները, դրանց քարոզչամեքենան, կեղծելով պատմությունն ու իրականությունը, հավակնում են տիրանալ բուն արևելահայ տարածքներին, ընդհուպ մինչև Երևանին, ինչպես արդեն ակնարկեցինք դրանք ներկայացնելով իբրև ոչ ավել, ոչ պակաս՝ «Արևմտյան Ադրբեջան», հմմտ.՝ Հակոբյան 2022, 28-32:

[10] Երիցեանց 1894, 358:

[11] Мелконян, Историко-политическое значение присоединения Восточной Армении к России (1801-1828 гг.), տե՛ս https://www.twirpx.com/file/398390/

երեքդարյա ռուսական պատմաքաղաքական կողմնորոշման ավանդական դրսևորման արտացոլանք: Պատմական ճշմարտությունն այն է, որ այս կամ այն պետության ու ժողովրդի հանդեպ հանդես բերվող քաղաքական կողմնորոշումներում ու համոզմունքներում երբեք չպետք է ընկնել ծայրահեղությունների մեջ, այդ թվում նաև Ռուսաստանի պարագայում: Ազգային-պետական գաղափարով առաջնորդվող յուրաքանչյուր քաղաքացու մոտ գլխավորը համազգային հեռագնա շահի գիտակցումն է, ազգային պետության ու անկախության պաշտպանությունը արտաքին ու ներքին թշնամական ուժերի ոտնձգություններից:

Դրվագ 2. Դիտարկումներ Ն. Աշտարակեցի - Ի. Պասկևիչ հարաբերությունների հարցի շուրջ

XIX դ. առաջին կեսի հայ ականավոր ամենաազդեցիկ հոգևոր գործիչներից էր հայ եկեղեցու Թիֆլիսի (Վիրահայոց) թեմի (1814-1830 թթ.), այնուհետև Նոր Նախիջևանի-Բեսարաբիայի հայոց թեմի առաջնորդ (1830-1843 թթ.), իսկ հետագայում՝ Ամենայն Հայոց կաթողիկոս **Ներսես Ե Աշտարակեցին** (1843-1857 թթ.), որը, տոգորված հայրենիքի ազատագրության (ինքնիշխանության) գաղափարներով, մեծ հույսեր էր կապել հյուսիսի հզոր հարևանի օգնության հետ: Լեոյի դիտարկմամբ՝ Ներսես Աշտարակեցին ավելի մեծ եռանդով շարունակեց Հովսեփ արք. Արղությանի գործը[12]: Ծառայելով Կովկասի հասարակական-քաղաքական կյանքի խոշոր կենտրոն Թիֆլիսում՝ Ն. Աշտարակեցին մեծ հեղինակություն էր ձեռք բերել և եռանդուն գործունեության ու կազմակերպչական մեծ կարողությունների շնորհիվ անմիջական կապեր ու շփումներ ուներ Կովկասի ռուսական զինվորական ու քաղաքացիական բարձր իշխանությունների, ինչպես, օրինակ, Կովկասի կառավարչապետի և Կովկասյան հատուկ կորպուսի հրամանատարի պաշտոնում 1827 թ. մարտից Ալեքսեյ Երմոլովին փոխարինած, Նիկոլայ I-ի հրամանով գեն.-ադյուտանտ նշանակված Իվան Պասկևիչի հետ[13]:

Պատմությունից ու գրականությունից հայտնի են Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միանալու ժամանակներից ի վեր հայ հոգևոր և աշխարհիկ գործիչների՝ Խ. Աբովյանի, Ն. Աշտարակեցու, Կարապետ արք. Էրզրումցու, Հ. վրդ. Ալամդարյանի, Մ. Թաղիադյանի, Մ. Նալբանդյանի և մյուսների տված բարձր գնահատականներն այդ առնչությամբ: Սակայն հետագայում նրանք մեծապես հուսախաբ եղան այդ հարցում: Ինչպես արդեն ասվեց, Ռուսաստանի օգնությամբ «հայրենյաց ազատության» ջերմ պաշտպան Ներսես արք. Աշտարակեցու՝ Հայաստանի ինքնավարության մասին հույսերը ոչ միայն չարդարացան, այլև իր անցանկալի հայացքների

[12] Լէօ 1902, 11:

[13] Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն 1974, 146:

համար նա հալածանքի ենթարկվեց ռուսական իշխանությունների կողմից և, իբրև քաղաքականապես անվստահելի անձ, Նիկոլայ I-ի հրովարտակով (23.IV.1830) ազատվեց Թիֆլիսի հայ հոգևոր թեմի առաջնորդի պաշտոնից և փաստորեն «աքսորվեց» Բեսարաբիա՝ որպես Նոր Նախիջևան հայոց թեմի առաջնորդ[14]: Կասկած չկա, որ արք. Ներսես Աշտարակեցուն Անդրկովկասի գործերից հեռացնելը, այն է՝ աքսորելը, ուներ ավելի շատ քաղաքական շարժառիթ: Եվ դժվար է համաձայնել տեղ-տեղ շրջանառվող այն կարծիքին, որ այդ հեռացումը բացատրվում է զուտ Կովկասի կառավարչապետ Ի. Պասկևիչի և Երևանի ժամանակավոր վարչության անդամ Ներսես Աշտարակեցու միջև անձնական լարված հարաբերություններով[15]:

Ուշադրության է արժանի պրոֆ. Հ. Հովհաննիսյանի դիտարկումը Ն. արք. Աշտարակեցու «աքսորի» հարցում: Նա, հենվելով մի շարք տվյալների վրա, չանտեսելով հանդերձ Ի. Պասկևիչ - Ն. Աշտարակեցի հարաբերությունների լարվածության հանգամանքը, կարծիք է հայտնում, որ ցարական իշխանությունները, նկատի առնելով 1828-1829 թթ. ռուս-թուրքական մոտեցող պատերազմը, նրան գործուղում են Բեսարաբիա (Քիշնև)՝ որպես տեղի հայոց թեմի առաջնորդ՝ խնդիր դնելով Բալկանյան տարածաշրջանում ապրող հայությանը կողմնորոշելու դեպի Ռուսաստան: Այդպիսով, ըստ Հ. Հովհաննիսյանի՝ «**ռուսական արքունիքի ձեռնարկած քայլը պետք է դիտել ոչ թե աքսոր, ինչն ընդունված տեսակետ է մեզանում, այլ ռուսական կառավարության հեռահար նպատակ** (ընդգծումը մերն է - Ա.Հ.)»[16]: Նշանակում է՝ Ն. Աշտարակեցու «աքսորի» գործում նրա և Ի. Պասկևիչի անձնական հարաբերությունները առաջնային դեր չեն խաղացել: Մինչդեռ պատմաբան Ալ. Երիցյանը նկատել է տալիս, որ Ն. Աշտարակեցու և Պասկևիչի միջև առկա լարված հարաբերությունները Ներսեսին թույլ չտվեցին լիովին վերադարձնել նախկինում բռնազավթված հայ եկեղեցական բոլոր կալվածքները[17]:

1843 թ. Ամենայն Հայոց կաթողիկոս Ներսես Ե Աշտարակեցու մասին գրականության մեջ կա պատմական մի ուշագրավ դրվագ: Կաթողիկոսը մինչև իր կյանքի վերջին րոպեն, իբր, իր ծոցագրպանում պահելիս է եղել մի գաղտնի թուղթ, որի բովանդակության մասին ոչ ոք չգիտեր: Նրա մահից հետո այդ թուղթն ընկել է Սարգիս եպիսկոպոս Հասան-Ջալալյանի

---

[14] Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, Ա. Երիցյանի արխիվ, թղթ. 156, վավ. 117, 1-3:

[15] Տե՛ս Երիցեանց 1894, 349, Երիցեանց 1895, 246: Օրինակ՝ Ալ. Երիցյանցը, հղում անելով ռուս հեղինակներին, նշում է, որ ազգությամբ մալոռուս Պասկևիչն ունեցել է «քինախնդիր բնավորություն»: Բացի այդ, պատմաբանը որպես ռազմական ու հոգևոր այդ երկու գործիչների միջև ծագած սառը հարաբերությունների պատճառ է նշում այն հանգամանքը, որ Օշականի (Աշտարակի) ճակատամարտում Պասկևիչը ռուսական զորքի կրած մեծ կորուստների գլխավոր մեղավորներից է համարել Ն. Աշտարակեցուն, որն այդ ծանր ճակատամարտի ժամանակ Էջմիածնի վանքի պաշտպանության համար գեն. Ա. Կրասովսկուց լրացուցիչ օգնություն է խնդրել (հմմտ. Երիցեանց 1894, 296-298):

[16] Հովհաննիսյան 2022, 258-259:

[17] Տե՛ս Երիցեանց 1895, 246:

ձեռքը, և վերջինս այդ նամակագրությունը իբրև թե վաճառել է ռուսներին[18]: Ալ. Երիցյանը այս կապակցությամբ գրում է. «Քանի մի անգամ տպագրութեան մէջ յիշուած է եւ այժմ էլ կենդանի ականատես պատմողներ կան, որ Ներսէսը մինչև իւր կենաց վերջին րոպէն ձախ ծոցի գրպանում մի թուղթ էր պահում, որից չէր բաժանվում գիշեր եւ ցորեկ. թէ ի՞նչ բովանդակութիւն ունէր այդ թուղթը - ոչ ոք չգիտէ, որովհետև նա ոչ ոքի չէր ցոյց տալիս»[19]: Բեսարաբիայից վերադառնալով՝ Ներսես Աշտարակեցին ստանձնում է Ամենայն Հայոց կաթողիկոսությունը: Իր մտերիմների հետ զրույցներից մեկի ժամանակ Պասկևիչի և անցած-գնացած անցքերի մասին խոսելիս ծերունի հայրապետը ձեռքը դնում էր ձախ ծոցագրպանին և խորին հառաչանքով ասում. «Պասկևիչը ահա այստեղ է կաշկանդուած»[20]: Ի դեպ, Ի. Պասկևիչին վերաբերող թղթի մասին ակնարկում է նաև արևմտահայ պատմագիր Ավետիս Պերպերյանը[21]:

Չի բացառվում, որ ռուս-պարսկական երկրորդ պատերազմի ժամանակ ռուսական բանակի Կովկասյան հատուկ կորպուսի հրամանատար, գեներալ-ադյուտանտ Ի. Պասկևիչը Ն. Աշտարակեցուն ոգևորելու, նրա միջոցով հայերին ռուսական կողմում ակտիվորեն ներգրավելու համար ինչ-որ խոստումներ է տվել՝ պատերազմի հաղթական ավարտի պարագայում, «բարձրագույն հաճությամբ», Ռուսաստանի հովանու ներքո Հայաստանին ինքնավարություն տալու մասին: Դրա վերաբերյալ «գրավոր թուղթն» էլ պահել է հայրենասեր կաթողիկոսն իր ծոցագրպանում: Բայց Ռուսաստանի պետական քաղաքականության մեջ խոսք չէր կարող լինել նորանվաճ Արևելյան Հայաստանին որևէ ձևով ինքնավարություն տալու մասին, քանի որ հակասում էր ռուսական շահերին: Ի. Պասկևիչն էլ չէր կարող կատարել իսկ տված խոստումը, եթե, իհարկե, նման խոստում նա տվել է, ուստի և առաջանում է Ն. Աշտարակեցուն աքսորելու գաղափարը. այն է՝ կառավարության մակարդակով, յուրօրինակ աքսորի ձևով Աշտարակեցուն հեռացնել Անդրկովկասից՝ դեպի հեռավոր Բեսարաբիա, որպեսզի դրանով նրան հեռու պահեն հայոց պետականության վերականգնման համար ունեցած իր ձգտումներից՝ «իբրեւ թէ վտանգաւոր անձ տէրութեան համար»[22]:

Եզրակացություններ

Հայ-ռուսական հարաբերությունների ձևավորման ու զարգացման գրեթե բոլոր փուլերում, չնայած հայերի ցուցաբերած նվիրվածությանն ու ընդգծված ռուսական կողմնորոշմանը, ինչպես նաև պատերազմներում ռուսա-

[18] Այդ մասին տե՛ս https://yhm.am, archives.
[19] Երիցեանց 1894, 356:
[20] Երիցեանց 1894, 356:
[21] Տե՛ս Պէրպէրեան 1871, 181:
[22] Երիցեանց 1894, 357:

կան կողմում հանդես բերած ակտիվ մասնակցությանը, այդուհանդերձ, Ռուսաստանի կառավարությունը, առաջնորդվելով մեծապետական շահերով, գրեթե բոլոր ժամանակներում **մերժել** է հայկական պետականության, առավել ևս՝ անկախության վերականգնման գաղափարը: Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալու ժամանակներից դեռ մեկ դար պիտի անցներ, որ հայ ժողովուրդը, անկախ որևէ երկրի ցանկությունից, մաքառելով, իհարկե, մարդկային վիթխարի կորուստների գնով, ի վերջո, 1918 թ. հասներ քաղաքական ազատագրության՝ հայոց պետականության վերականգնմանը:

Օգտագործված գրականություն

Ագաթանգեղոս 1983, Հայոց պատմութիւն, Երևան, ԵՊՀ հրատ., 700 էջ:

Անասյան Հ. 1961, XVII դարի ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 443 էջ:

Դիլոյան Վ. 1966, Լազարյանների հասարակական-քաղաքական գործունեությունից, Երևան, Հայկ ՍՍՌ ԳԱ հրատ., 273 էջ:

Դիլոյան Վ. 1989, Արևելյան Հայաստանը XIX դարի առաջին երեսնամյակին և հայ-ռուսական հարաբերությունները, Երևան, ԵՊՀ հրատ., 356 էջ:

Երիցեանց Աղ. 1894, Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը եւ Կովկասի հայք XIX դարում, մասն Ա (1800-1830 թթ.), Թիֆլիզ, «Մ. Մարտիրոսեանի եւ ընկ.» տպ., 658 էջ:

Երիցեանց Աղ. 1895, Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը եւ Կովկասի հայք XIX դարում, մասն Բ (1831-1842 թթ.), Թիֆլիզ, «Մ. Մարտիրոսեանի եւ ընկ.» տպ., 592 էջ:

Լազեան Գ. 1991, Հայաստան եւ Հայ Դատը, Երևան, «Ադանա», 435 էջ:

Լէօ 1902, Ստեփանոս Նազարեանց, Թիֆլիս, Մարտիրոսյանցի տպ., 224 էջ:

Լեո 1926, Հայոց պատմություն, նորագույն շրջան, մաս 1, Երևան, ԵՊՀ սղագրական հրատ., 228 էջ:

Հայ ժողովրդի պատմություն 1974, հ. 5, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 734 էջ:

Հայոց պատմություն 2010, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, հ. 3 Երևան, «Զանգակ-1997», 704 էջ:

Հովհաննիսյան Ա. 1957, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գ. 1, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 524 էջ:

Հովհաննիսյան Հ. 2022, Ներսես Աշտարակեցի-Իվան Պասկևիչ հակամարտության հարցի շուրջ, ՎԷՄ, Երևան, N 4 (80) հոկտեմբեր-դեկտեմբեր, էջ 253-270:

Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, Երիցյանի արխիվ, թղթ. 156, վավ. 117, էջ 1-3:

Նազարեանց Ստ. 1913, Երկեր, հ. 1, Թիֆլիս, տպ. «Ն. Աղանեանի», 428 էջ:

Պարսամյան Վ.Ա. 1947, Ա.Ս. Գրիբոյեդովը և հայ-ռուսական հարաբերությունները, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 279 էջ:

Պարսամյան Վ.Ա. 1967, Հայ ժողովրդի պատմություն (1801-1917 թթ.), հ. 3, Երևան, ԵՊՀ հրատ., 535 էջ:

Պէրպէրեան Ա. 1871, Պատմութիւն Հայոց (սկսեալ ի 1772 ամէ փրկչին մինչեւ Յամն 1860), Կ. Պոլիս, տպ. «Պողոսի Քիւրիշճեան եւ ընկ», 621 էջ:

Փավստոս Բուզանդ 1987, Հայոց պատմութիւն, Երևան, ԵՊՀ հրատ., 455 էջ:

Гусейнов Р. 2013, Конфликты на Кавказе: история, современность и перспективы урегулирования, 8 июля, www.rizvanhuseynov.com/201blogpost24.html, http://yerevan500.com/?m=seh&id=14 (ներբեռնման օրը՝ 18.03.2023):

Внешняя политика России XIX и начала XX в. 1960, серия 1, т. 1, Москва, с. 93-94.
Мелконян А., Историко-политическое значение присоединения Восточной Армении к России (1801-1828 гг.), https://www.twirpx.com/file/398390/ (ներբեռնման օրը՝ 03.04.2023).
Парсамян В.А. 1978, Присоединение Восточной Армении к России и его историческое значение (к 150-летию), Ереван, тип. ЕГУ, 67 с.
Присоединение Восточной Армении к России (այսուհետև՝ ПСАР) (1801-1813) 1972, сб. док.), т. 1, под ред. академика Агаяна Ц.П., Ереван, изд. АН Арм. ССР, 715 с.
ПСАР (1814-1830) 1978, сб. док., т. 2, под ред. академика Ц.П. Агаяна, Ереван, изд. АН Арм. ССР, 658 с.
Тунян В.Г. 2012, Католикос Всех Армян Нерсес V Аштаракеци. «Защитник отечества», Св. Эчмиадзин, «Первопрестольный Св. Эчмиадзин», 424 с.
https://yhm.am, archives (retrieved on 18.03.2023).

ИДЕЯ ВОССТАНОВЛЕНИЯ ГОСУДАРСТВЕННОСТИ В АРМЯНСКИХ СВЕТСКИХ И ДУХОВНЫХ КРУГАХ В ПЕРИОД ПРИСОЕДИНЕНИЯ ВОСТОЧНОЙ АРМЕНИИ К РОССИИ

Арарат Акопян

Резюме

Присоединение Восточной Армении к России однозначно имело важное значение для армянского народа с точки зрения прогресса, наметившегося во многих сферах жизни. Помимо этого, на этом историческом этапе, в первые десятилетия XIX века, армянские светские и духовные круги предприняли ряд конкретных попыток по восстановлению армянской государственности (царства).

С этой целью группа российско-армянских деятелей – Х. Лазарян, К. Аргутян и другие, с ведома российских властей, разработала проект автономного Армянского царства под эгидой России. Надежды на восстановление армянской государственности питал и видный армянский духовный деятель, архиепископ Нерсес Аштаракеци. Символическим выражением этого являлась «Армянская область», созданная на основе манифеста российского императора Николая I, однако она просуществовала до 1840, а в 1849 году стала окраинной провинцией Российской империи.

Следует отметить, что практически на всех этапах армяно-российских отношений, несмотря на проявляемую армянами преданность и пророссийскую ориентацию, российское правительство, руководствуясь империалистическими и экспансионистскими интересами, отвергало идею восстановления армянской государственности и, тем более, независимости.

И лишь спустя 100 лет после упомянутых событий армянский народ, ценой огромных усилий, обрел политическую свбоду и в 1918 году восстановил армянскую государственность, создав Республику Армения.

Ключевые слова – Восточная Армения, Россия, Туркманчайский договор, Н. Аштаракеци, И. Паскевич, автономия, «Армянская область».

THE IDEA OF RESTORING STATE IN ARMENIAN SECULAR AND SPIRITUAL CIRCLES DURING THE ACCESSION OF EASTERN ARMENIA TO RUSSIA

Ararat Hakobyan

Abstract

The accession of Eastern Armenia to Russia objectively had a progressive significance for the Armenian people in terms of advances in many spheres of life and activity of the country and people. Then, in the first decades of the 19th century, during the accession of Eastern Armenia to Russia, Armenian secular and spiritual circles made more substantive attempts to restore Armenian statehood (kingdom).

To this end, a group of Russian-Armenian leaders Kh. Lazaryan, K. Argutyan and others, with the knowledge of the Russian authorities, developed a project for an autonomous Armenian kingdom under the auspices of Russia. At the same time, the prominent Armenian spiritual figure Arch. Nerses Ashtaraketsi also hoped for the restoration of Armenian statehood. One of the symbolic expressions of all this can be considered the creation of the "Armenian region" by the manifesto of the Russian Emperor Nicholas I, but it did not last long, until 1840, in 1849 it turned into an ordinary outlying province of the Russian Empire.

From the outline of the article it follows that in almost all periods of Armenian-Russian relations, despite the devotion shown by the Armenians and the pronounced Russian political orientation, active participation in wars on the Russian side, the policy of the Russian government, regardless of the color of its flag, towards Armenia and the Armenian people was characterized by the fact that, guided by imperialist and aggressive (expansionist) interests, the idea (goal) of restoring Armenian statehood and, even more so, independence, almost always was rejected.

After the mentioned events, about a century will pass, until the moment, when, regardless the will of Russia, the Armenian people with the greatest efforts and enormous human losses finally achieved political liberation and in 1918 the Armenian statehood was restored – the Republic of Armenia.

Key words – Eastern Armenia, Russia, Treaty of Turkmenchay, N. Ashtaraketsi, I. Paskevich, autonomy, "Armenian region".